

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան դիմ 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:
Ուսանողի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում դրվում են միմյանի նմանությամբ մեջ:

Օտարադարձարարի դիմում են ուղղակի:

Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերից):

Ցայտարարութիւն ընդունվում է մինչ լիցիտացի:

Ցայտարարութիւնների համար վճարում են:

Խրաքանչիւր թաւին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր գիրք: Նա-
մակ Շուշու: Նամակ Շամախուց: Նամակ Նոր-
բաղրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Հայոց խնդիր: «Порядокъ» քաղաքի
թղթակցութիւն: Արտաքին լուրեր: ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ԳԻՐԲ

Այս օրերս հրատարակվեցաւ մի նոր
գիրք «Անահիտ», գործ: Ղ. Աղայեանցի:
Այդ գրողի վեպիկի նիւթը վերցրած
է Աղուանական կեանքից և հիմնված է
գլխաւորապէս առասպելախառն գրոյցների
վրա, որոնք մինչև այսօր աւանդաբար տա-
կաւին պատուում են ժողովրդի բերանում:
Վեպի գիւղացուհի Տաւադուհի Ան-
ահիտն է, այդ գիւղական նախորդի անվա-
հեր, իմաստուն և թովիչ աղջիկը, որի գե-
ղեցիկ ս կ զ ր ու ճ ր շնորհիւ (Թաւադուհի
թէ գեղջուկ՝ արհեստագէտ լինելու է)
լուծվում է վաչագան թագաւորի անելա-
նելի տարտարոսից ազատութեան անլուծա-
նելի կնիքով:

Ամենամեծ հաճութեամբ, աննկատելի
կերպով աւարտեցի յիշեալ գրքի ընթեր-
ցանութիւնը. լեզուն սահուն և կենդանի
է, նիւթը ժողովրդական, զբաւիչ:

«Անահիտը» պատանկական վառ երեւա-
կայութեան համար՝ մի քաղցրահամ բա-
ժին է, որը ճաշակելով՝ կը բացվի պատա-
նու տխրութիւնի անյատակ խորութիւնը և
նա կը զգայ իր մէջ մի բուռն ձգտում,
մի անգուսպ պահանջ միշտ այդպիսի խոր-
տիկները տեսնել իր անպաճօց՝ սեղանի
վրա:

«Անահիտը» մեր արդի գրականութեան
վիպական մասի լաւ զարդերից մէկն է:

Բայց ցաւալի է շատ, որ դարեւոր հնու-
թեան փոշիների տակից այդ տեսակ աշ-
խատանքներ լոյս աշխարհ հանողը և դու-
րա նմանները՝ մեզանում չեն գտնում ըստ
արժանոյն բարոյական և նիւթական քա-
ջալերութիւն, որով նրանք աւօրեայ կեան-
քի ծանր պայմանների տակ ընկձկնում
հարկադրվում են ակամայ հրաժարվել ի-
րանց կոչմանը ծառայելուց և իսպառ-
ձեռնթափ լինել զօրծից ի մեծ կորուստ
մեր նոր գրականութեան:

Խորհուրդ կը տայի ամեն մի հայի, ծե-
րից սկսած մինչև պատանին, կարգալ, ան-
պատճառ կարգալ «Անահիտը»:

Գ. Գալանթարեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 12-ին

Գեոաֆան աղջկեանց պատկեր—հասարակ
ախտ է իւրաքանչիւր հայ քաղաքում, բայց Ղա-
րաբաղում և մասնաւոր Շուշի քաղաքի մէջ նա
հասել է մի զարուբիւնի աստիճանի: Անտարա-
կոյս, այս տխուր երևոյթը ամեն երկրում կայ,
բայց մեր մէջ հասել է մի անխիղճ, զգուշի
գրութեան: Օրէնքը Անդրկովկասում թոյլ է տա-
լիս օրիորդներին ամուսնանալ մինչև տասներեք
(13) տարեկան հասակը, մինչդեռ ամբողջ Ռու-

սաստանում անկարելի է պատկեր այդ փոքր հա-
սակում: Ի հարկէ, օրէնքը ի նկատի է ունեցել
մեր կլիմային, որը իր թէ աւելի տաք է, քան
թէ հիւսիսում, մինչդեռ հարցը այդպէս ընդհան-
րացնել անկարելի է, պատճառ. օրինակ Թիֆլի-
սի կլիման անհամեմատ տաք է, քան թէ Շու-
շու. այստեղ ձմեռը ցուրտը հասնում է մինչև
—15°, միջին թեւով հասնում —7°, —8°, իսկ ա-
մառը շարունակվում է երեք ամիս, ամենաբարձր
ջերմութիւնը հասնում է 18, 20°, մնացած ժամա-
նակը ցուրտ է լինում: Կարելի է առանց սխա-
լմունքի ասել, որ ձմեռը շարունակվում է վից,
եօթ ամիս. այժմ հոկտեմբեր ամսին տեսնում
ստիպված պէտք է փայտ վառել:

Շուշին մօտ (5000) հինգ հազար ոտնաչափ
բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից, չըջա-
պատած է ահագին անտառներով, ձիւնով ծած-
կված լեռներով և հետևաբար աւելի սօսիկ է
Ռուսաստանին, հիւսիսին, քան թէ հարաւին:
Բայց դարձեց, կայ մի ուրիշ հանգամանք, որը
համարեա հաւասար է կլիմային, դա է հասա-
րա կա կան կե ա ն ք ր: Որքան մանուկը յաճախ
չարժի հասարակութեան մէջ, այնքան նորա մէջ
վաղ պէտք է դարձնեն ու զարգանան այն ձեզ-
տուները, ցանկութիւնները, որոնք յատուկ են
նրա բնութեան: Բայց ինչպէս յայտնի է, Շու-
շու մէջ, իբրև մի անկիրթ ասիական քաղաքում
օրիորդը բոլորովին զուրկ է հասարակական
կեանքից, մինչև անգամ ամուսնացած կինը խիստ
բռնութեան տակ է և փակ կեանքից դուրս գալ
չէ կարող: Ուրեմն, ոչ կլիման և ոչ հասարակա-
կան կեանքը չեն կարող չափահասանք օրիոր-
դին 13 տարեկան հասակում: Եւ ճշմարիտ, հա-
մարեա միշտ ամուսնացող օրիորդները դեռահաս
մանուկներ են, որոնք երեխաների պէս չարաշա-
րվում, տանջվում են իրանց կողմից, անխիղճ
30, 35 տարեկան ամուսինների ձեռքին: Յայտնի
բան է, որ մարդ ամուսնանում է իր ցեղը, սե-
ռը պահպանելու համար, այսինքն, որդիք ունե-
նալու, նրանց կեանքի համար պատրաստելու,
վերջապէս իր կեանքին և աշխատանքին ընկեր
գտնելու համար: Նոքա միանում են նոր սերունդ
պատրաստելու, մէկ մէկու օգնելու, մէկ մէկու
հետ տխուր ու քաղցր տպաւորութիւնները բա-
ժանելու, քրտինք ու արտասուքը սրբելու հա-
մար: Ուրեմն երկուսն էլ պէտք է գտնէ հասած
լինեն այն հասակին, երբ մարդ զգում է այդ
կարիքը, երբ նա ցանկանում է, կարող է ֆի-
զիկապէս կատարել այդ պաշտօնը: Չենք խօսում
ազատ ընտրութեան, սիրոյ, համակրութեան,
չերկու կողմի համաձայնութեան վրա, որը մին-
չև այժմ մեր մէջ terra incognita է և մինչև
անգամ անբարոյականութեան լրբութեան նը-
շան:

Ինչ է սորա պատճառը. կարծեմ, ոչ մի երկ-
րում, ոչ մի քաղաքի օրիորդը, կինը այնքան
վայրենի, անխիղճ ճնշողութեան մէջ, ծանր լծի
տակ չէ, ինչպէս Ղարաբաղում: Այստեղ աղջիկ
ունենալով մի զարուբիւնի դժբաղդութիւն է: Ըն-
թերցող, կը հաւատաք, որ երբեմն ծնող մայրը
պատրաստ է անասնաբար խնդրել իր նորածին
աղջկան, եթէ նա երկուց չը քաշէ Աստուածա-
նից: Արդեօք այս ինչ երևոյթ է: Միթէ դարա-
բաղցի կինը զուրկ է մայրական զգացմունքնե-
րից, որոնք յատուկ են բոլոր կենդանիներին:
Ոչ, դրա պատճառն է տղամարդը, այդ արեւաբ-
բու պարսիկների մտրակի տակ մեծացած տղա-
մարդը, որի կոպտութիւնը, քարէ սիրտը, եր-
կաթի կամքը հռչակվել են շատ տեղեր: Այո,
այդ յատկութիւնները երբեմն լաւ հետեանքներ
են տալիս, երբ ուրիշ բարենպաստ ուղղու-
թիւն են ստանում, բայց ընտանեկան կեանքում
նրան շինում են մի անխիղճ «փայտ», բռնա-
կալ իր թոյլ և քնքոյշ հպատակներին տանջելու,
կնոջ, որը աղջիկ-մանուկ ծնեց, ամեն օր, ամեն
գիշեր նրա երեսը լծուք ու մուրձ պէտք է գալ,
նա դրանով տասը աստիճան ցածրանում է իր

բռնակալի աչքին. նա ցաւից չը պիտի կոչէ,
վասնի զի միութարութեան տեղ պէտք է անտա-
նելի յիշողներ լսէ: Շատ անգամ ես ինձ տուել
եմ այս հարցը. միթէ դարաբաղու ուղեղը մի
այնպիսի կազմուածք ունի, որ չափահաս դառած
ժամանակը պէտք է բոլորովին զուրկ մնայ մար-
դասիրական զգացմունքներից, գոնէ ընտանեկան
կեանքում: Ի հարկէ, մենք չենք խօսում մի քա-
նի պարոնների մասին, որոնք «հարմուկայ»,
Մօսկովայ, Մարտիլիա են քնացել և սովորել ա-
ւելի լուսաւոր կերպիւ բռնակալութիւն անել,
այլ «սով» դարաբաղուց վրա: Այդ վայրենու-
թիւնը, կոպտութիւնը կարելի է տեսնել ամեն
աղջի ուսմիկ, ստրկութիւն ծծած ժողովրդի մէջ.
օրինակ, ուսուցիչներն էլ չէ խնայում իր կը-
նոջը՝ ծննդի, չարաբեղ նրա համար բնական
կարիք է, որովհետեւ նրան էլ չեն խնայում, նրա
կեանքի ճանապարհն էլ չէ վարդով փռած, բայց
աւելի և դարաբաղուց ծննդի մէջ մեծ զանազա-
նութիւն կայ: Ռուս ուսմիկը այնքան մեղմ բը-
նութիւն ունի, որ ծննդից յետոյ համբուրում է
իր կնոջը, միասին արտասովում, ներողութիւն
խնդրում վերջը, բայց դարաբաղցին չարաթիւն-
րով շարունակում է իր անասնական յիշողները,
խռովութիւնը, բարկացած, զգուշիկ դէմքը. նը-
րա տուն վերադառնալը շատ անգամ առ ուղղ
է ձգում խեղճ կնոջ և քնքոյշ մանուկների սիր-
տը: Կան դարաբաղցիք, որոնք ամուսնելով խռով
են իրանց կնոջ յետ մի չնչին պատճառով. կան
հայեր, որոնք իրանց ութ, տաս տարեկան աղ-
ջիկներն մի անգամ էլ համբուրած չեն: Ես մին-
չև 20 տեղ լսած եմ, ինչպէս նորածին աղջկա-
նը առաջին աղաղակին դուռն է «զարուհար»
մանկաբարձից սկսած մինչև մանուկն հայրը.
«Չո՛ւ, լըած օրը ես ընի՛ ա՛ն խեղճ երեխայի
առաջին լսած խօսքերը: Հասակը առած օրիորդը
այստեղ մի խաղալիք է, անասնական ցանկու-
թիւնների առարկայ, ստրուկ և հետեաբար ծը-
նողները ջանք են անում նրան, որքան կարելի
է, չլուծ գլխներիցը ռադ անեն, իսկ վայրենի
ամուսինը—որքան կարելի է, քնքոյշ հասակի,
մատաղահաս խաղալիք գտնէ իր անասնականու-
թեան համար: Սրա հետեանքը լինում է այն, որ
գեղեցիկ կարմիր վարդերը թաւածում են ամուս-
նութեան առաջին կամ երկրորդ տարում, որ
ցեղը մանրանում, փչանում է: Անա գլխաւոր
պատճառը այն տխուր երևոյթի. որ դարաբաղ-
ցի տղամարդը երկաթի պէս մարմին ունի,
վարդի պէս փուլած է, իսկ կին-մարդը նիհար,
գունատ, «սիրտը թւթաւալիս», որովհետեւ նրա
համար իւրաքանչիւր ծնունդը մահից ազատվել
է: Այս հարցի վրա դարձնում ենք մեր վեհա-
փառ Հայրապետի լուրջ ուշադրութիւնը, որով-
հետեւ Շուշու 13 տարեկան օրիորդը հաւասար
է Թիֆլիսի 8, 9 տարեկանին, բացի դրանից օ-
րէնքով դրված 13 տարուց դարաբաղցիք չար-
չիւրութիւնով երբեմն մէկ, երկու տարի էլ են պա-
կասացնում, այնպէս որ 11, 12 տարեկան աղջիկ
պատկերը մի հասարակ երեւոյթ է և նմանապէս
նրանց մեռնելը ծննդեան ժամանակ արկւնահո-
սութիւնից, պատճառ օրիորդի կազմուածքը դեռ
պատրաստ չէ լինում այդ հասակում ծննդեան
համար: Ցեղը փչանում է, դա մարդասպանու-
թիւն է. ժամանակ է ուշադրութիւն դարձնել
այդ կենսական ծանր հարցի վրա:

Ի ժիշկ Մ. Աւստամեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 1-ին

Երբ հասալ Շամախի, իմ առաջին մտադրու-
թիւնը հայոց թեմական դպրոցը տեսնելն էր:
Ներս մտայ մի դասարան: Դասատուութիւնը
հայոց լեզու էր, որը աւանդում էր պ. Ա. Եգա-
նեանց անունով մի շամախեցի ուսուցիչ Երուսա-
ղէմի ժառանգաւորաց դպրոցի աշակերտ: Երբ

ներս մտայ, ոչ մի աշակերտից բարե չընդունեցի
իմ ողջունելու փոխարէն. նոյն իսկ ուսուցիչը
մի պաղ կերպով ինձ ողջունելուց յետոյ,
սկսեց շարունակել իր դասատուութիւնը աշակեր-
տաց աղմկի մէջ, բայց ես նկատում էի, որ
ամեն մէկը զբաղված է մի ուրիշ բանով և ու-
սուցչի դասատուութեանը չէ հետեւում: Թողնելով
ուսուցչին իր դրութեան մէջ, անցայ միւս դա-
սարանը: Այստեղ պարագում էր պ. Ա. Աղա-
մեանցը. նրա դասատուութիւնը ուսուցչի լեզու
էր. սա պարագում էր ինչպէս մի իսկ ուսուցիչ,
որ հասկանում է իր պարագաւորութեան նշանա-
կութիւնը և աշակերտներն ևս մեծ ուշադրու-
թեամբ լսում էին նրան, որովհետեւ ուսուցչի
հմտութիւնից, աշակերտների համար դասատու-
թիւնը մի պարզ և զուարճալի խօսակցութիւն
էր թվում, և ահա սրանից է որ աշակերտները
ուսուցչին հայերէնից էլ լաւ են կարդում. նոյն
իսկ ես չը կարողացայ զգուշ իմ ուղախոսութեան
և շնորհակալութիւն յայտնելու մանկավարժ ու-
սուցչին: Ուսուցչի արանքը բաղկացած է չորս բա-
ժանմունքից, որոնց նախակրթարանում պարա-
պում է ուսուցիչ և միանգամայն տեսուչ՝ պ.
Ա. Գալստեանցը. ես նրան ճանաչեցի որպէս
փարձառու, ագնուստիտ և կրթեալ. նա աշխա-
տում է նոր աշակերտների մէջ ուսման արմատը
լաւ ամրացնել:

Ուսուցիչները բոլորն էլ աղին երիտասարդ-
ներ են, բայց պ. Ա. Եգանեանցը չափից դուրս
բարեկիրտ է և աշակերտները չեն լսում նրան.
այդպիսով նա իր ազդեցութիւնը աշակերտների
վրա արդէն կորցրել է: Պէտք է յիշեմ այստեղ
և կրօնագիտութեան ուսուցչին. նա շատ յաճախ
բացակայ է գտնվում դասերից, իսկ եղած ժա-
մանակն էլ շատ քիչ բան է սովորեցնում և դաս
աւանդելու կերպը չը գիտէ:

Ցանկալի էր որ աւելի երկար խօսէի փոքր
ինչ ես օրիորդական դպրոցի մասին, բայց որ
կողմն որ դառնում եմ, ամեն ցաւալի դէպքերն
միտորելով ես կարելի է մի լակոնական կեր-
պով յայտնել, որ նա խեղճ դրութեան մէջ է:

Տղայոց դպրոցին կից գտնվում է աղգային
ընթերցարանը, ուր երկու հազար կտորից աւելի
գրքեր կան, թէ ուսուցչին և թէ հայերէն լեզ-
ւով: Այցելելով մի կիրակի օր ընթերցարանին,
ես ցանկացայ նոր լրագիրներ տեսնել, բայց
փոխ-գրապահը ասաց որ, չը գիտեմ թէ ի՞նչ
մօտն է. այս բանը ինձ զարմացրեց և ես իմա-
ցայ, որ լրագիրները հանաւուրց և ձեռք ձեռք
պտտելուց յետոյ են մտնում գրադարանը...

Մի բանի օր միալով Շամախում, այցելեցի
թեմական առաջնորդին, յուսալով որ այստեղ
փոքր ինչ ուրախալի բաներ կը լսեմ, բայց
սրբազանը բացի զանգատներից ուրիշ ոչինչ
չունէր ասելու. նա շարունակ պարսաւում էր
իր հակառակ կուսակցութեանը և իր խօսքերից
յայտնվեց որ ինքն էլ, մեր այժմեան շատ հո-
գեւորականների նման, սիրում է հանգիստ ապ-
րել: Իսկ «զօրքել» բառը նա սաստիկ ատում
է, միայն սիրելի է նրան խորհուրդ տալ այն
բանի մասին, որը ինքը հօտը չէ առել. բայց
մի բան որ ինձ աւելի զարմացրեց նա է՝
որ կարծես թէ այդ հոգեւորականը իր օգնական
վարդապետի ստորադրեալն է, որովհետեւ նրա
թիւղաբութեամբ է միշտ խօսում:

Ցաւալի է ճշմարիտ թեմի վիճակաւորի այս
թոյլ ընթացքը, ուսումնարանի և եկեղեցու
անկարգ դրութիւնը և նամանաւոր Շամախու
երկմաս կուսակցութեանը միմեանց հակառակ
ընթացքը. — Այս բոլոր ցաւալի դէպքերը կա-
րող է կարգի դնել նոյն ինքն թեմի վիճակաւոր
առաջնորդը, եթէ լինի նա իր պարտաւորու-
թիւնը հասկացող հոգեւորական:

Ա.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 16 հոկտեմբերի

Շատ անգամ ձեր պատուական լրագրի ամենալավ և ազդու յօդուածները նուրբել էք չքաւոր աշակերտներին, առաջարկելով հասարակութեանը զանազան միջոցներ, որոնցով միայն կարելի է քիչ թէ շատ ապահովացնել նրանց անախճանքի և միանգամայն անտանելի դրութիւնը: Բայց դժբախտաբար այդ ազդու յօդուածները համարեա ոչ մի անգամ արձագանք չը գտան Թիֆլիսի հասարակութեան մէջ: Անցեալ տարի, երբ պ. Տ. Նաւասարդեանց մի յօդուածում, որ տպւած էր ձեր լրագրի էջերում, առաջարկեց հասարակութեանը հիմնել Թիֆլիսում մի ճաշարան չքաւոր աշակերտներին էժան գնով ճաշ տալու համար, հասարակութիւնը խից իր աւանջները և չուզեց մի խօսք անգամ լսել այդ բարեխառնակ առաջարկութեան մասին: Գետոյ էլի դուք նորից բարձրացրիք այս ճաշարանի հարցը, բայց հասարակութիւնը էլ իր սովորական անտարբերութեամբ և լռութեամբ պատասխանեց ձեր վերանորոգած հարցին: Եւրէկ «Մշակի» № 191 մէջ էլ յիշեցրել էիք Թիֆլիսի հասարակութեանը այն, որ արդէն շատ անգամ կրկնել էք, «անհրաժեշտ է հիմնել մի հաստատ, մշտական բարեգործական ընկերութիւն, որի նպատակը լինէր օգնութիւն հասցնել ուսում առնող չքաւոր աշակերտներին»: Արդե՞ք այս անգամ ինչպէս պէտք է վերաբերվի այս հարցին Թիֆլիսի պատեւելի հասարակութիւնը:

Այժմ դառնում եմ դէպի ձեզ, Թիֆլիսում ուսում առնող օտարաբաղաճքի չքաւոր աշակերտների ծնողներ: Չէ որ «Մշակի» գրածները դուք էլ էք կարդում: Եթէ «Մշակի» գրածներին չէք հաւատում, միայն այն պատճառով, որ ձեր որդիքը չեն յայտնում ձեզ իրանց գրութիւնը, չեն ուզում ձեզ անհանգիստ անել և մտաւնջութեան մէջ գցել: Չէ, հաւատացե՛ք, պարոններ, որ «Մշակի» գրածները այստեղի չքաւոր աշակերտների մասին կէտ առ կէտ ուղիղ են և ոչ մինը չափազանցութեան չէ հասցրած, այլ ընդհանրական, դեռ շատ բան ձեր որդեգրութեան մասին մտած է ձեզ անշարժ: Չնայ որդիքը շատ անգամ, փող չը գտնելով, իրանց գրպանի մի քանի կոպէկով գնում են մէկ ֆունտ ցամաք հաց, կամ մի կտոր պանիր էլ հետը, և այսպէս են ճաշում ամբողջ շաբաթներ, ոմանք ամիսներով չայի, տաք կերակրի երես չեն տեսնում: Ընդդէմ տաք սննդանի և շորի կարօտ են: Իւրաքանչիւր անգամ, երբ ուսուցիչը մի նոր դիմք է ասում գնելու, նրանց սրտից «ախեր» են, որ դուք են դալիս, «չուսահատութիւն» է, որի մէջ նրանք ընկնում են, այսպիսի կեանք վարելիս: Այդ չքաւորների համարեա երեք քաւորը մասը միշտ պարտքերով են ապրում և շատ անգամ, յայտնի բան է, պարտքերը չեն վճարում: Եւ գիտե՛ք ում պարտքերը չեն վճարում—էլի իրանց նման չքաւորների, որովհետեւ հարուստը չքաւորին պարտք չէ տալիս: Եթէ մի առ մի նկարագրելի այստեղի չքաւոր աշակերտների կեանքը, որին ես ինքս ականատես եմ, գուցէ շատ ծնողների սրտերը վրդովեցնէի: Ուստի այսքանը ևս բաւական եմ համարում, որ դուք, Թիֆլիսում ուսում առնող չքաւորների ծնողներ, հաւատաք, որ ձեր որդիքը արդարեւ դեռ իրանց մտաղով հասարակութեանը արգելադրելի դէմ են միշտ պատերազմում: Եթէ այսպէս շատ երկար շարունակվի էլ ինչ յոյս կարելի է դնել նրանց ապագայ ոյժերի...:

Եթէ այս բոլորը այսպէս է և ձեր որդիքն են այստեղ փչանում, զո՞նք դուք էլ անտարբեր միմիայեք, հողացե՛ք դուք էլ ձեր կարեաց չափ մի բարեգործական ընկերութիւն հիմնելու մասին:

Սիմ. Տէր-Վրդաբեկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 20-ին, երեքշաբթի, վաղ առաւօտեան կրակ յայտնվեցաւ Սարաջիկի տանը որ գտնվում է Վրդաբեկեան փողոցի վրա, Արծրունու գաւառէրային կից: Այլովում էր կտուրը: Հրաշք վարութիւնը շուտով հանգրցեց կրակը, եթէ ոչ հրդեհը սպառնում էր հարեան տներին: Ուշադրութիւն ենք դարձնում ում հարկին է այն անձունը երկույթի վրա, որ պ. Սարաջիկի տան հետը մի տակ գտնվում էր մի տեսակ պահեստ

ամեն տեսակ հին և դիւրաւառ նիւթերի, օրինակ, փաւաներ, թղթեր, ճիւղներ, կարտոններ և ասում են մինչև անգամ նաւթ: Բացի սորանից Սարաջիկի տունը այնպէս անձուներ և ամեն օրէնքներին հակառակ է շինված, որ եթէ այն տան մէջ մի անգամ կրակ ընկաւ, այլ ևս փրկութիւն չը կայ ոչ նոյն իսկ այդ տան համար, ոչ էլ հարեան տներին: Բոլոր բաղկոնները և սանդուխտները այդ տան մէջ փայտից են շինված և տան մէջ միայն մի մուտք կայ: Գաւառի ձեռք է և ջուր չունի: Գոյս ունենք որ պօղիցիական և քաղաքային վարչութիւնները կը ստիպեն պ. Սարաջիկին, որ անագին գումար է դործ դնում նոր տներ շինելու վրա, փոխել իր հին տան մէջ բոլոր բաղկոնները և սանդուխտները և փայտը փոխարինել երկաթով կամ քարով:

Հոկտեմբերի 20-ին կայացաւ Թիֆլիսի ժողովարանում մեր քաղաքի Գլխաւորայի չքաւոր աշակերտների օգտին կոնցերտը: Ահագին դաշլի-ճը լի էր բազմութեամբ: Պ. պ. Ալիխանով և Կորգանով անցին, երկու պիանիստ վրա, Լիւբեզով փոխարկված Վէրբի մի պիէսա: Օրիորդ Իվանովսկայա երգեց. նրա ձայնը թէն ընդարձակ չէ, բայց դուրեկան է: Օրիորդ Գարագաշեան կարգեց երկու բանաստեղծութիւններ Նայերէն լեզուով, իսկ պ. պ. Օպօշինին և Տըլսովսկի կարգեց բանաստեղծութիւններ ռուսերէն լեզուով: Պ. Արամեան չը մասնակցեց կոնցերտին տկարութեան պատճառով: Տիկին Երզնկանայա անց Բուրնշտայնի մի տրիօ պ. պ. Տօրանիի և Թուշմաովի հետ:

Մեզ հաղորդում են Ղազար գաւառի Կօթի գիւղից, որ երկրորդ ամիսն է որ նշանակվել է այդ գաւառում մի նոր պրիստաւ և այդ ժամանակից սկսած վերջ դրվեցաւ գաւառում գործութիւններին, աւագակութիւններին և մարդապանութիւններին, որոնք առաջ սաստիկ յաճախ էին կրկնվում: Ղազարի բոլոր գիւղերում: Զանկալի է, աւելացնում է թղթակիցը, որ մեր նոր պաշտօնական երկար մնաց իր պաշտօնի մէջ և մի որ և է մասնութիւն չանեն նրա դէմ, ինչպէս սովորութիւն ունեն բոլոր կովկասցիները ամենապատեական պաշտօնականներին իրանց տեղից հեռացնելու նպատակով: Նոյն թղթակիցը հաղորդում է մեզ և այն, որ Կօթի գիւղում երեւցել է մի անշարժ հիւանդութիւն, որ շատ դժուար է տանում բնակիչներին: Այդ ցաւը դրանով է սկսվում, որ մարմինը վրա յայտնվում է սի խոց, որ քոր է գալիս, և որի տեղի վրա երեք օրից յետոյ յայտնվում վերք: Այդ վերքն է որ և սպանում է մարդուն:

Զայտնի իտալուհի ճանապարհորդ և հեղինակ տիկին Կարլա Սերէնա, որ մի քանի տարի սըրանից առաջ Թիֆլիսում է եղել, այս օրերս նորից հասել է մեր քաղաքը: Նա հրատարակում է իր գրութիւնները Կովկասի վրա «Tour du Monde» ֆրանսիական ամսագրի մէջ: Տիկինը հետաքրքրվել է շատ պ. Գիւրգենանի Անիի աւերակների ֆոտոգրաֆիաներով և դիտարկութիւն ունի գետեղել այդ լուսանկարներից մի քանիսն իր աշխատանքի մէջ: Տիկինը մեր ներկայութեամբ նայեց պ. Գիւրգենանի աշխատութիւնները և հիացած էր հայոց հին ճարտարապետութեամբ: Նրա կարծիքով այդ ֆոտոգրաֆիաները մի գիւտ են գիտութեան համար: Տ. Սերէնան դիտարկութիւն ունի ճանապարհորդել Կովկասում:

Ստացվեցաւ խմբագրութեան մէջ № 43 Վիեննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի: Այդ համարի մէջ խմբագրութիւնը յայտնում է որ լրագրին կրկին թոյլ է տուած մուտքը Թիւրքիայի մէջ միայն դիպլոմատական ներկայացուցիչներին, իսկ մնացած բաժանորդներին դարձեալ չէ թոյլ տուած: Լրագիրը դարձանում է թէ այդ արգելման պատճառով պ. Պօլսի հայ հարուստները այլ ևս չեն կամենում գրվել հայոց օրգանին, կարծես թէ լրագրի նպատակն է որ իրանք հայերը կարգան նրան: Բոլոր հայերը միայն դրամական միջոցներ տան, թէ կուզ իրանք միջոց չունենան կարգալ թերթը, ասում է «Ժուրնալ դ'Օրիան» լրագիրը, որովհետեւ հայոց ինդրի պաշտպանները նշանակութիւն ունի Եւրօպայի համար, որ պէտք է կարգալ և ծանօթանայ հայերի պահանջների հետ: Միթէ պ. Պօլսի հա-

յերը չեն հասկացել մինչև այժմ որ կարող են նիւթական միջոցներ տալ Վիեննայի Ֆրանսիական լրագրին, բայց փոյթ չէ որ իրանք միջոց չեն ունենայ կարգալու թերթը:

Շաբաթ օր, հոկտեմբերի 24-ին վրաց լեզուի Ս. Պետերբուրգի համալսարանի նախկին պրօֆեսոր պ. Չուբինով կարդաւ է Արծրունու թատրոնում մի դասախօսութիւն ռուսերէն լեզուով:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի № 43 մէջ վերջացաւ Գրիգոր Արծրունու դասախօսութեան տպագրութիւնը: Այժմ այդ դասախօսութիւնը կը հրատարակվի առանձին բրօշուրայով, ֆրանսերէն լեզուով: Նոյն համարում տպւած է ռուսագրութեան արժանի մի թղթակցութիւն հայոց ինդրի մասին, որի հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին մեր հետեւալ համարներից միում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅՈՑ ԽՆԻՐ

Թիւրքաց Հայաստանի մէջ, շարունակում է «Кавказ» լրագրի յօդուածագիրը, անհիշանութիւնը կատարեալ է և ահա դրա ապացոյցները: Պատերազմի ժամանակ զինւորները և ձիաների մատակարարութիւնը կատարվում էր բնակիչների հաշով և այդ ժամանակ բնակիչներին ստացականներ էին տրվում, որոնց ներկայացնելուց յետոյ վըրճված էր ստացականների համեմատ փոքրացնել տասանորդի հարկը: Բայց այժմ տեղական վարչութիւնները բոլորովին չեն ընդունում այդ ստացականները: Պատերազմի ժամանակ Բայազէթի մօտ քիւրդերը կուրդպետ էին սայլերով հաց և սայլերի մէջ լծված եղները: Այժմ իշխանութիւնը այդ հացը տանող հայերից ուժով կրկնակի վարձ է պահանջում: Պատերազմի ժամանակ կամաւոր տուրք էր վերցնվում 10—20 պիաստր այն պայմանով, որ այդ տուրքը յետոյ հանվի զինուորական ծառայութեանց ազատ լինելու համար հարկից: Մի և նոյն ժամանակ վերջին հարկն էլ մի տարի առաջ էր վերցրած և ստացականներ են տուած, վերցրած էր նոյնպէս արօտատիրների հարկը: Այժմ իշխանութիւնը այդ բոլորը նորից պահանջում է: Նոյնն է պատահել և միւս պարտականութիւնների հետ, որոնք դրված են բնակիչների վրա պատերազմի ժամանակ: Օրինակ բնակիչների արած ծախսերը եկուր մահմետականներին պահելու համար, մեսգերի-տէհ-հար առանձին հարկը և այլ դըրանց նմանները այժմ մնում են առանց խոտացած վարձատրութեան: Անշարժ կայքից վերցնվող հարկը ստացվում է կամաւորական գնահատութեան համեմատ և դըրահատութիւնը իսկականից միշտ աւելի է լինում: Զինուորական ծառայութեանց ազատ լինելու համար հարկը օրէնքի հակառակ վերցնվում է 15 տարեկանից փոքրերից և 60 տարեկան ծերերից: Նոյնպէս օրէնքի հակառակ բահայի հասցնելը բնակիչների հաշով է կատարվում: 1876 թուականից ապագիներ են պահանջվում և փարսութիւնը մթերքների չէ ընդունում, այլ դրանով նրանց կրկնակի դինն է պահանջում: Այնուհետեւ թուում են քիւրդերի, չիւրքերի և միւս փայրերի անգթութիւնները և չարագործութիւնները:

Նոյն «Journal d'Orient» լրագրին հաղորդում են Բիթլիսից, որ շատ հայեր կաւանաւորված են երեւակայական դաւադրութիւններին մասնակցելու համար: Հարկերը հաւաքվում են աներկելի անգթութիւններով և անիրաւութեամբ հին ցուցակների

համեմատ, ի նկատի չառնելով ազգաբնակչութեան փոքրանալը: Զանապարհորդներին ամենայն օր կողոպտում են և իշխանութիւնը անտարբեր է մնում:

Մուշից էլ այդպիսի դանգատներ են ստացվում: Պօզլան ցեղի քիւրդերը երկու անգամ յարձակվել են հայոց սուրբ Կարապետ վանքի վրա: Աւագակների երեք խմբեր Սէյիշի, Օսմանի և Արդուլայի առաջնորդութեամբ փչացրին վանքապատկան դաշտերը, փախցրին անասունների մի մասը և երկրագործական գործիքները: Վարդապետները և գիւղացիները տանջանքների են թարկվեցան:

Քիւրդերով շրջապատված Մօզան, Կենուս, Սօսուն և Պերնաշէն կայմակաճութիւնների հայերի դրութիւնը ամենախաւար զոյներով է նկարագրված: Ամբողջ վրայետի մէջ հարկերը հաւաքվում են զինւորների օգնութեամբ անպսի անգթութեամբ:

Միւրա-բէյի որդի երեւելի քիւրդ Մուսա-բէյ, որ մի Գարացի հային սպանելու և միւսին վիրաւորելու համար բանտարկված էր, այժմ ազատված է բանտից և վարչական պաշտօն է ստացել: Իսկ նրա հայրը Բիթլիսի Զանապարհների տեսուչ է նշանակված: Այդ բովանդակութեան նամակներ վրդովեցուցի տեղեկութիւններով ստացված են Վիեննայի լրագրի խմբագրատանը: Գիւրդերից, Հաջինից, Ալեպպից, Շաբի-նից, Գօրգիսարից (Սիվաս), Գեդից, Կարպուտից, Բիթլիշից, Ալաշկերտից, Վանից, Բաշկալից, Երզնկայից և այլն:

Արպէս զի Բիթլիսի դաշնադրի հիման վրա օգնեն Թիւրքաց հայերի այդ ողբալի դրութեանը, մեծ պետութիւնների ներկայացուցիչները, ինչպէս հաղորդում է «Journal d'Orient» լրագիրը, համաձայնվել են հետեւալ գլխաւոր վերանորոգութիւնների վերաբերութեամբ:

Անհրաժեշտ է համարված հայերով բնակեցրած նահանգների մէջ հայ գլխաւոր նահանգապետներ նշանակել առաջուց որոշված ժամանակամիջոցով, 6 կամ 7 տարուց ոչ պակաս և նրանց միջոց տալ կանոնաւորապէս իրագործել նրանց յանձնված նախագիծը: Մշտաբնակ ազգաբնակութեան ապահովութիւնը պահպանելու համար քիւրդերի ապաւանակութիւններից առաջարկվում է տեղական բնակիչներից, թէ քրիստոնեայ և թէ մահմետական, ժանդարմների զօրաբաժիններ կազմել, այն պայմանով, որ գլխաւոր նահանգապետը իրաւունք ունենայ այդ զօրաբաժինների հրամանատարներին նշանակելու: Նոյն նպատակի համար անհրաժեշտ է համարվում մասամբ եւթարկել գլխաւոր նահանգապետի իշխանութեանը սուլթանի գումարների հրամանատարներին: Անիւրե և, որ այդ միջոցի աջողութիւնը գլխաւորապէս կախումն կունենայ գլխաւոր նահանգապետի անձնաւորութեանց և այդ պատճառով պետութիւնների ներկայացուցիչները պէտք է ազդեցութիւն ունենան նրա ընտրելու ժամանակ: Բացի քիւրդերի ասպատակութիւններից և կողոպտումներից Թիւրքիահայապատակ հայերը տանջվում են իշխանութեան ստորին գործակալատարների կամայականութեանց և ահա մի կողմից բնակիչների և միւս կողմից իշխանութեան զանազան գործակալատարների, սկսելով կալաօսից մինչև կայմակաճ և Վօլթեսարիֆը, յարաբերութիւնները կանոնաւորելու համար, առաջարկվում է դատարանի արդարացի կազմակերպութիւն: Այժմ դատաստանական իշխանութիւնը վարչական մէջլիսների անդամների ձեռքին է, որոնք ոչ թէ մի-

այն խառնվում են վարչական գործերի մէջ, այլ և կապով վերցնում են զանազան հարկերի և տուրքերի հաւաքելը:

Ինչպէս որ քաղաքակրթված երկիրների մէջ լինում է, նոյնպէս և այստեղ անհրաժեշտ է վարչական և դատաստանական իշխանութիւնները բաժանել միմեանցից:

Բ. Գրան եւրոպացի խորհրդատուները դատաստանական կանոնադրութիւն կազմելու համար առաջարկում են մի յանձնաժողով նշանակել մասնագէտներից, որոնց թւում լինեն և եւրոպացիներ, որոնք սկզբից դատաստանական բարձր հիմնարկութիւնների անդամներ կը լինեն և օրինակ կը տան դատաստանական գործեր վարելու համար:

Հարկերը կանոնադրելու և Ասիական թիւրքիայի մէջ հարկերը հաւաքելու ժամանակ սովորական գեղձուների առաջն առնելու համար պահանջվում է մարջնադատ դարձնել կանոնադր, այսինքն դրամական հոգային տուրք, որի քանակութիւնը պէտք է հոգիների չափի և հոգի յատկութեան համեմատ լինի: Մեծ պետութիւնների ներկայացուցիչների կարծիքով, բնակիչներից ստացվող պետական բոլոր տուրքերը երկու կարգի պէտք է բաժանվեն. մարջնային տուրքերը և աղի հարկը պէտք է ծառայեն պետական ընդհանուր պէտքերի համար և այնուհետև մնացած եկամուտները պէտք է ծառայեն տեղական վարչական և դատաստանական պէտքերին: Մնացորդի մի մասը դարձեալ տեղական պէտքերի համար հարկաւոր է գործածել, միւս մասը Կ. Պոլսի օւղարկել: Հարկերը հաւաքելու և նրանց տեղական պէտքերին ծառայեցնելու համար երեւի հարկաւոր կը լինեն տեղական հիմնարկութիւններ:

Ի հարկէ վերանորոգութիւնների այսպիսի հարեանցի նախագծի իրագործելը հազարաւոր արգելքների կը հանդիպի և հազարաւոր հարցեր կը բարձրացնի այս կամ այն միջոցի գործադրութեան մանրամասնների վերաբերութեամբ, որոնց լուծելը պահանջում է շատ ժամանակ, աշխատանք և գործերի դրութեան հետ ծանօթութիւն: Որպէս զի մօտաւորագէտ հասկանալով, թէ ինչպիսի դժուարութիւնների դէմ պէտք է մարտնչել թիւրք վերանորոգիչները, բաւական է յիշել շարխաթի նշանակութիւնը և սարսափելի արգելքները թէ նրան դատաստանական գործերի մէջ չը խառնելու և թէ նրա ոյժը պահպանելու դատաստանական վերանորոգութիւնների ժամանակ, ինչպիսի միջոցներով ապահովել դատաստանական վճիռների իրագործումը վայրենի քիւրդերի վերաբերութեամբ, ինչպէս նրանց մոցնել նախաձիւ մէջ, կամ ինչպէս ստեղծել մի պետութեան մէջ վարչական և դատաստանական հիմնարկութիւններ, որոնք արմատականապէս տարբեր են միմեանցից, որոնց իրաւասութիւնը այս կամ այն ազգութեանը վերաբերէր, իսկ այդ ազգութիւնները բնակվում են միասին և ցրված ահազին տարածութեան վրա և անմատչելի տեղերում: Միմիայն մեծ համբերութեամբ և պահանջների խիստ չափաւորութեամբ կարելի է ամենահամեստ բաղաւոր հետեանքներ ստանալ քաղաքական ոյժմեան արշաւանքից, այն էլ եթէ թիւրքաց կառավարութիւնը ճշմարիտ աջակցի մեծ պետութիւնների ջանքերին թիւրքահապատակ հայերի դրութիւնը բարեօրոգելու համար:

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

„ПОРЯДОКЪ“ լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Բերլինից: Գեռ ևս ամենքին հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք Գամբետտա գնացել է Վարցին, թէ ոչ: Հասարակութիւնը այդ հարցով չափազանց զրաւված է, թէպէտ լրագիրները մի քանի պատճառներից դրդված աշխատում են, եթէ ոչ լուռութեամբ անցնել այդ անցքը, որովհետեւ այդ անկարելի է հասարակութեան հետաքրքրութեան պատճառով, գոնեա այդ այցելութեանը առանձին նշանակութիւն չը տալ: Որ այդ անտարբերութիւնը առերես է և պահպանվում է գնազան նպատակների համար, կարելի է ապացուցանել նրանով, որ մամուլը պաշտօնական քննութիւն սկսեց, որպէս զի իմանայ, թէ երեւելի ծանապարհօրը որտեղից է անցել, ինչ տեղ է կանգնել, որքան ժամանակ է մնացել և այլն: Զանազան լրագիրների թղթակցիցները այցելեցին երկրթութիւնների բոլոր կայարանները, բոլոր հիւրանոցները, ամեն տեղ տեղեկութիւններ հաւաքեցին և այժմ մանրամասնօրէն նկարագրում են Կ. Մասսօբի avocat (կեղծ անուն, որով իբր թէ Գամբետտա գնացել է Գերմանիա) ծանապարհօրութիւնը: Յայտնված է, որ Գամբետտա եղել է Համբուրգի մէջ և եղել է Hôtel S.-Petersbourg հիւրանոցի մէջ: Այնտեղից ուղևորվել է Լիւբեկ, այսինքն Վարցինի ուղղութեամբ, վերցնելով տոմսի մինչև Սլաւ կայարանը, որտեղ և հարկաւոր է կանգնել, եթէ կամենում էք այցելել Վարցին: Այստեղից Գամբետտա երեք օրով անհետանում է: Այնուհետև Գամբետտա յայտնվում է Կանցիգի մէջ Hôtel du Nord հիւրանոցում: Երեք օրից յետոյ Գամբետտային տեսնում են Գրեզդինում Hôtel de Russie հիւրանոցում, ուր նա հասել էր Եյրկոնենից: Գրեզդինից Կ. Մասսօբի ուղևորվել է Ֆրանկֆուրտ, ուր նա իջել է Hôtel de Russie հիւրանոցում: Ահա թէ ինչ են իմացել լրագրական քննիչները: Լրագրական քննութեան այս հետեանքները աւելի էլ հաստատեցին ընդհանուր համոզմունքը, որ ճշմարիտ կայացել է „Եւրոպայի ամենաերեւելի մարդկանց“ տեսութիւնը: Կիսապաշտօնական լրագիրները լուռում են, ոչ հաստատելով և ոչ հերքելով այդ փաստը, իսկ այդ լուռութիւնը հասարակութիւնը ընդունում է իբրեւ համաձայնութեան նշան:

Այժմ տեսնենք, թէ լրագիրները ի՞նչի համար են հարեանցի կերպով խօսում այն հարցի մասին, որ ընդհանուրի հետաքրքրութեան առարկայ է: Պահպանողական լրագիրները ուրախ կը լինէին գովել „Գերմանիայի համար այդ փառաւոր անցքը, երեւելի կանցիլերի այդ նոր փայլուն աշուղտիւնը“ և այլն, բայց նրանք չեն կարող այդ անել, որովհետեւ պաշտօնական լրագիրները լուռում են: Մինչև վերջինները նշան չը տան, պահպանողականները չեն կարող խօսել: Յանկարծ „Երեւելի կանցիլերը“ կը ցանկանայ պաշտօնապէս ոչինչ չասել տեսութեան մասին: Այդպիսով կարելի է յիմարացած մնալ: Եւ ահա պահպանողականները, „Post“ լրագրի օրինակին հետեւելով, բաւականանում են նկատողութիւններով Գամբետտայի անձնական արժանաւորութիւնների մասին: Իսկ ազատամիտ լրագիրները... տարբարաբար նրանց սիրտը ծաղում է: Իբրեւ ազգասէր-գերմանացիք, որոնք կայսերական գաղափարի երկրպա-

գուներ են, նրանք շատ ուրախ են, իսկ իբրեւ ընդդիմադրականներ, նրանք յուսահատված են:

Թոյլ տուէք մի փոքր պատմութիւն անել, որ աւելի լաւ կը պարզի գործը, քան թէ ամենամանրամասն մեկնութիւններ: Երէկ փողոցում պատահում եմ առաջադիմական զինաւոր լրագիրներից մէկի խմբագրին, որի հետ ես ծանօթ եմ և որ սարսափելի ազգասէր է: Նա գնում է տխուր, գուռը կախ գցած:— „Շատ լաւ թղթակցի ունէք, նկատում եմ ես, իսկոյն նրան կարելի է դատաստանական քննիչ դարձնել“:— «Այո, ճարպիկ որսորդական շուն է»։— «Բայց դուք նրան փառ շնորհակալութիւն էք յայտնում: Նա հրաշքներ է գործում, իսկ դուք նրա տեղեկութիւնների մասին հարեանցի նկատողութիւն էք անում, մինչև անգամ չէք յայտնում ձեր սեփական կարծիքը՝ արդեօք Գամբետտա այցելեց Բիսմարկին թէ ոչ“:— «Արածեմ այցելել է, մինչև անգամ հաստատ կարելի է ասել, որ այցելել է»։ Եւ այս խօսքերը նա այնքան տխուր արտասանեց, կարծես մի ցաւալի անցք էր պատմում:— «Ինչ է պատահել ձեզ, հարցնում եմ ես, կարծես մահուան պատժի լինէք դատապարտված, այնպէս էք խօսում»։— «Բայց մի՞թէ դուք չէք հասկանում, թէ ինչպիսի փառք է Բիսմարկի համար, եթէ ճշմարիտ Գամբետտա նրան այցելել է: Դա այն է, ինչին նա այսքան տարի ձգտում էր և որ Գերմանիան չափազանց ցանկանում է: Դա իսկապէս թաւաքան է, մի ապացոյց, որ Ֆրանսիան իւրաքանչիւր քայլափոխում չի վնասի գերմանական շահերին»։— «Շատ լաւ հասկանում եմ և հէնց այդ պատճառով ինձ զարմացում է ձեր տխրութիւնը: Դուք իբրեւ ազգասէր պէտք է ուրախութեանից թռչկոտնիք»։— «Այո, իսկապէս ես ուրախ եմ, շատ ուրախ եմ, միայն թէ ի՞նչի այդ անցքը տոյժ պատահեցաւ և ոչ թէ մի ամբից յետոյ»։— «Այժմ ես լաւ չեմ հասկանում, մեկնեցէք ձեր խօսքերը»։— «Եթէ կը յայտնվի, որ Գամբետտա ճշմարիտ այցելել է Բիսմարկին, այն ժամանակ վերջինի ազդեցութիւնը աւելի էլ կը մեծանայ և մենք ամենավատ ընտրութիւններ կունենանք: Խաղաղութեան զրաւականը, որ ստացված է միայն Բիսմարկի ջանքերով հազարաւոր խոտուղիներից մեծ ազդեցութիւն կունենայ: Ամենքը խաղաղութիւն են ցանկանում և ամենքը կը հասկանան, որ նա այժմ ապահովված է իսկոյն կը սկսեն գործերի ծախսերը պակասեցնելու, խօսել զինաթափութեան մասին և ամենքը կը սկսեն երկրպագութիւն տալ Բիսմարկին»:

Եւ ճշմարիտ ընտրութիւնները մօտենում են և Գամբետտայի այցելութիւնը կարող է մեծ ազդեցութիւն ունենալ նրանց վրա: Գուցէ հէնց այդ պատճառով պաշտօնական շրջանները լուռում են, չեն հերքում տարածված լուրերը, որպէս զի նրանց ամենքը կարողանան յօգուտ Բիսմարկի մեկնել: Իսկ ազատամիտները այս անգամ էլ չը կարողացան զսպել իրանց ազգային կասկածաւորութիւնը: „Nat. Zeit.“ լրագիրը թուեւում էր այն հիւրանոցների անունները, ուր իջեանել է Գամբետտա, նկատում է. «Ֆրանսիայի ապագայ միւստորը կարծես առանձին հակում ունի դէպի ռուսական անունները»։ Բայց այդտեղ զարմանալի ոչինչ չը կայ: Եթէ այդպիսի դատարկ դէպքերից յետոյ երազկողութիւններ անենք, այն ժամանակ Ֆրանսիական առաջին մինիստրի սէրը դէպի ռուս անունները աւելի բնա-

կան է, քան թէ նրա այցելութիւնը Բիսմարկին: Ի հարկէ այդ այցելութիւնը, եթէ նա ճշմարիտ կայացել է, դեռ ևս խաղաղութեան այնպիսի նշանաւոր զրաւական չէ, ինչպէս մտածում է գերմանական ժողովուրդը:

Վերջապէս աւելորդ չեմ համարում տեղեկութիւն տալ ձեզ այն ազդեցութեան մասին, որ գործեցին տարածված լուրերը ռուսաց կառավարութեան դիտաւորութեան վերաբերութեամբ Օստդէյի նախահանգի մէջ զեմստովներ մոցնելու համար: Թէ պահպանողականները և թէ ազատամիտները միտեցակ հաւատացին, որ այդ լուրերը անհիմն չեն, բայց այդ երկու բանակներն էլ գործին զանազան տեսակ վերաբերվեցան: Պահպանողականները հանգիստ են և ժրպտում են, իսկ ազատամիտները ընդհակառակը վախենում են և զայրանում: Նրանց կարծիքով, Օստդէյի նախահանգի մէջ զեմստովներ մոցնելով, ձեռնամուխ են լինում գերմանացիների իրաւունքներին և պնդում են, որ նրանց ցեղակիցները այդ նախահանգի մէջ հաստատամտութեամբ և աներկիւղ ընդունեն այդ փոթորիկը: Մասամբ խոտովանելով, որ Օստդէյի բարոնները շատ անգամ դէպի չարն են գործ գրել իրանց իշխանութիւնը, ազատամիտները պնդում են, որ իշխանութիւնը այնու ամենայնիւ նրանց անվիճելի իրաւունքն է և որ դատարարների ներկայացուցիչները զեմստովների մէջ կը թուլացնեն ազնուականութեան, այսինքն գերմանական տարրի առաւելութիւնները: Այդպէս են դատում ազատամիտները, մինչդեռ նրանց քաղաքական հակառակորդները, պահպանողականները, ինչպէս վերեւ նկատեցի, ուշադրութիւն չեն դարձնում այդ լուրերի վրա: Նրանք չեն հաւատում, որ այդ գործը կատարվի: «Դիտաւորութիւն կայ, ճշմարիտ է, ստույգ են նրանք, բայց դիտաւորութեան իրագործելը դեռ հեռու է, իսկ եթէ մի բան կը հիմնվի, որ զեմստովի առնուն կը կրէ, այնու ամենայնիւ նա այնպիսի ձեւ կունենայ, որից գերմանական շահերը չեն կարող վնասվել»:

ԱՐՏԱԳՐԻՆ ԼՈՒՐԵՐ

— Գերմանական լրագիրները հազորդում են, որ այս օրերս վախճանվեցաւ երեւելի գերմանացի իրաւաբան, Հայդլբերգի պրոֆէսոր Բլունտլի: Նա չվէյցարացի էր, բայց Գերմանիայում պրոֆէսորութիւն էր անում: Յիւրիսի կանտօնի տաճանադրութիւնը իր գոյութեամբ դիտաւորապէս հանգուցեալին է պարտական: Բլունտլի յայտնի է գլխաւորապէս իր երեւելի աշխատանքներով միջազգային իրաւունքի վրա:

— Լրագիրները հաղորդում են որ Սպանիա և իտալիա հրաժարվեցան կապել Ռուսաստանի հետ քաղաքական յանցաւորները յանձնելու պայմանագիրը, այն ձևով, որ մշակել է այդ պայմանագիրը ռուսաց դիպլոմատները:

— Գերմանիայի մէջ ընտրութիւնների առթիւով եղած յայտնութիւններից ուշադրութեան արժանի են կաթօլիկ-բաւարական կուսակցութեան ազգաբարութիւնը և սոցիալ-դեմոկրատ Լիբլինստի արտասանած ձառը Մայնցի մէջ: Այդ ձառով նա խտուրթեամբ քննադատում էր իշխան Բիսմարկի անտեսական դիտաւորութիւնները: Բաւարական ազգաբարութիւնը պաշտպանում է Բաւարիայի անկախութիւնը թագաւորող տան իշխանութեան տակ: Ազգաբարութիւնը պահանջում է սոցիալ-լիստների դէմ հրատարակված օրէնքների ոչնչացնելը, պատերազմական բիւզետի փոքրացնելը և բանտներին ընկերութիւնների հիմնելը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՖԻՆԱՆՍԵՐԵՆԻ Ե ԻՏԱԼԵՐԵՆԻ ԴԱՏԱՐԻ
ՀԱՐՑՆԵՆԻ «ՄՇԱԿԻ» ԽԱՐԱԳՐՈՒԹԻԱՆ
ՄԵՋ:

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ԴԱՏԱՐ ԸՆԴԱՆԻՔՆԵՐՈՒՄ ՀԱՐՑՆԵՆԻ «ՄՇ-
ՇԱԿԻ» ԽԱՐԱԳՐՈՒԹԻԱՆ ՄԵՋ:

ՏԻԿԻՆ ՇՁՈՒԿԻՆԱՅԻ ԽԱ-
ՆՈՒԹՈՒՄ ստացված են ամենամիջին
ձևերի կանանց և երեխաների **ԳԼԽԱՐԿ-**
ՆԵՐ ամենալավ տիպի և ծախվում են
ամենաէական գներով: Յարգւոյ հասարակու-

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ
ՖԻՆԱՆՍԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱ-
ՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԻ
Ձեռնարկ հայ տղայոց և օրիորդաց ու-

Ձեռնարկ հայ տղայոց և օրիորդաց ու-
սուսնարանների համար, աշխատասիրու-
թիւն Աւետիքի Տէր Յակովբեանց:
գինն է 60 կոպէկ:

Յանկացողք ստանալ պէտք է դիմեն ուղ-
ղակի աշխատասիրողին «Тифлисть. Ар-
мянская семинарія Нерсисянъ» կամ
Тифлисть „Центральная книжная
торговля»:
Ա. Տէր-Յակովբեանց

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէական պահեստ
մերէի և հայերէնների:

Մամուլի տակից դուրս եկաւ թՁՈՒԿ
գործ. ԱՐՓ. ԴՈՔԷԻ, Թարգմ. Հ. Տէր-Մի-
քայէկեանց: Ծախվում է Կենտրոնական և
Կովկասեան գրախանութներումը 809-ՈՒՑ
Թիֆլիսի րէպական ուսումնարանի հայ
աշակերտների ապագայ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱ-
ԴԱՐԱՆԻ: Օտար քաղաքացիք կարող են
ուղղակի դիմել այս հասցեով: Въ Тиф-
лисъ. Реальное Училище. Г. Теръ-
Микелову.

ԾԱԽՈՒՄ Ե
Ձեռնարկ գնով, երկու արկանի տուր
Օղբնակի փողոցի վրա, Պովիլանի խնամու-

ՀԱՆՔԱՅԻՆ ԲԱՂՆԻՍ
ԻՎԱՆ ՄԻՆԵՑԻՉ ՄԻՐՁՈՅԿԻ ՈՐԿԵՐԱՆՑ
Հինգշաբթի հոկտեմբերի 22-ին կը բացվեն
նոր շինված հասարակաց կանանց և տղա-

ԾԱԽՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ՔԱՆ ԹԵ ՈՒՐԻՇ ՏԵՂ. Դուրաբա-
ներ, կոնֆեկտներ, **ԿԱԿԱՍ**, բրինձ, Ա-
ՄԱՆԵՐԻՆ, բոկալներ, թասեր, երես լուա-

ԾԱԽՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ
քան թէ ուրիշ տեղ. Թէճ, կակաօ, ՇՈԿՈԼԱԿ,
բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ,
բաժակներ, բոկալներ, թէյյամաններ, սու-

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ

Կիրակի օր, 8 1/2 ժամին
երեկոցան



Երեկոյ ֆրանսիացի ձեռ-
նածու.
ԿԱԶԼՆԵՎ
Ներկայացումն կը տայ:

Մանրամաները ափիշաներում:

Նպաստան երկաթեայ պատենտած ԵՐՕՐՆԵՐ, լեմէնների
պաշարով Բանսոմի ֆաբրիկայից, ծախվում են գործարանական
գներով **ՊԻՎ. ՕՎ. ԵՐՕՎ. Ե ԳՕԼԴԻԻՍՏԻ** կանտորայում
Թիֆլիսում: Դիօրցովայի փողոցի վրա Երծրունու գալէրէում №
188

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և լազկաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատոլիկաց փողոցի սնկիւնում ՄԻ-
ՔԱՅԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցեով. **Тифлисъ, Михайлу**
Н. Теръ-Никогосову.

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր., 1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր.,
ճաղող աթոռներ 1 ր. 50 կ., ՔԱՅՏ-ԱԹՈՒ 1,000 ՄԱՀԱՍԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400
4 ր., ԲԱԶԿԱԹՈՒ-ՄԱՀԱՍԱԼ 10 րուր և արշին բամբակ. 1 ր.—1 ր. 30 կ., պա-
տեկի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի րուսինա 40 կ.—1 ր., 300 հատ րէփօլեր
աման ջրոցներ 50 կ., պատեկա ծրծողների 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԿՆՈՎ, 10,000
համար 60 կ. ֆուտուր, անգլիական ՎԱՆԵՆԱ- ֆուտուր թէյի ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. եր
ներ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱ-** ֆուտուր թէյի ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. եր
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: ֆուտուր թէյի ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. եր
10,000 զոյգ գուլթաններ 25 կ.—ից զոյգը, ֆուտուր թէյի ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. եր
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԱՆԵՐ 30 կ.— ֆուտուր թէյի ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. եր

Վերականգնեցող **ՄԱԿ-ՄԱՍ-**
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար-
ձնող: Կիր 2 ր. շերտ, **ՓՈՍՏԱ-**
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ**
ԻԿՂ, մազերը ամրացնող հա-
մար, 1 ր. ամանը վրձին գլխա-
յաւի դէմ, **ՏՈՒՆԱԼԵՐԻ ՍԱ-**
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն
37—100

ՋԱՔԱՐԻԱՅ ԳՐԻԳՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԽԱՅԱՆՈՒՆՑԻ» հրատարակութեամբ
լոյս են տեսած հետեւեալ ԳՐԱԿԱՆ և ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐԱՆԻՔԸ:

1	Սիմէօնեանց Մ. Ժողովածու թուարանական ինդիքների մ. ա. (ամբողջ թուեր)	50
2	Նոյնը մասն. ր. (կտորակներ)	50
3	Պատգամներ թուարանութեան	65
4	Ղուկասեանց դասագիրք ընթերցանութեան	40
5	Ներդաշնուր պատմութիւն հին դարը մ. ա.	80
6	Սիմէօնեանց Պ. Սրբազան պատմութիւն հին կտակարանի հ. ա.	60
7	Նոր կտակարանի հ. ր.	60
8	Տէր Ակոբեանց դասագիրք ուսուցող լեզուի	60
9	Ընթերցարան մասն առաջին	25
10	Պատմութեան աղօթից	7
11	Զ. Գրիգորեանց մարդկագիտութիւն	50
12	Սիմէօնեանց Ն. Պատգամներ ընդհանուր աշխարհագրութեան հ. ա. մասն նախագիտելիք 5 պատկերով	35
13	Նոյնը հ. ր. մասն ուսումնական և բնական 31 պատկերով	60
14	Ն. Գ. մասն քաղաքական	60
15	Բանաթիւնց քերականութիւն աշխարհիկ լեզուի	25
16	Երզնկեանց մանկական երգարան	20
17	Չայնադեալ մանկական երգարան	40
18	Գամառ. Բառիպայ մանկական ոտանաւորներ և երգեր	20
19	Սիրիմանեան թուարանութիւն (թուեր)	12
20	Կոնդրատենկոյի գծագրութեան օրինակներ	40
21	Գերական-Ալբերտեան հին ոճով	10
22	Տղայանցներ չորս երես թերթ	5
23	Շարժական տառեր մեծատառ և փոքրատառ թերթ	5
24	Ներկեցի երկուցը թ. դարու	1 ր.—
25	Թէոդորոս Ոչտունի	1 ր.—
26	Թորոս Լեւոնի (2-դ տպագրութիւն)	1 ր.—
27	Թագուրեան փ ո ր ձ լեզուադիտական հետազոտութեան	50
28	Նաղարեանց պոլիմպիլիալ—մանկական թատրոն	20
29	Արեւմտեան Նալա և Գամայեանտի	20
30	Ա. Մ. Ե. Պ. Գրեգորեանց Հայի, Արամ և Վահագն	30
31	Մանգինեանց Ազգային—բնականական աշխարհ	25
32	Նոյնը — — — — — Գրեգորեանական աշխարհ	30
33	Նոյնը — — — — — Նախապետական և հայրենի աշխարհ	65
34	Երզնկեանց դասագիրք Չայնադեալ	30
35	Տէր-Արամեանց Հ. պատմութիւն 24 պատկերով	1 ր.
36	Տնային բժշկական մարմնամարզութիւն	40

Վերոյիշեալ գրքերը տասնից աւելի առնողներին 20% զեղումն կը լինի գինը կանխիկ վե-
ճարողին: